ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
<<ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՊԱԼԱՏ>> ՀՈԱԿ
**<<ДЕТСКО-ЮНОШЕСКИЙ ДВОРЕЦ ИСКУССТВ >> ОНКО ОБЩИНЫ ГЮМРИ ШИРАКСКОГО МАРЗА РА**
"CHILDREN'S AND YOUTH PALACE" CNCO OF GYUMRI CITY OF SHIRAK REGION RA

Էլ.փոստ- palat1923@mail.ru
Հեռ. (+374)312 54734

Գյումրի,Մատնիշյան182
Гюмри, Матнишян 182
Gyumri, Matnishyan 182

Ելից՝ 836
25.02.2026 թ.

ՀՀ.Շիրակի մարզի Գյումրու համայնքապետի
պարտականությունները կատարող
Պարոն Ա.Առաքելյանին,
Նույն համայնքի «Մանկապատանեկան
արվեստի պալատ» ՀՈԱԿ-ի տնօրենի
ժամանակավոր պաշտոնակատար
Վ.Մատինյանից

## Դիմում

Հարգելի Պարոն Ա. Առաքելյան

Գյումրու "Դեղձանիկ" վոկալ-էստրադային համույթը արդեն 46 տարեկան է: Այս տարիների ընթացքում համույթը տվել է հարյուրավոր շրջանավարտներ, որոնցից շատերը հայտնի են երգարվեստում և շարունակում են Հայաստանը ներկայացնել աշխարհի տարբեր բեմերից: Համույթը բազմաթիվ հեղինակավոր մրցույթների և փառատոնեի դափնեկիր է: Այս տարիների ընթացքում ձևավորված ավանդույթի համաձայն "Դեղձանիկ" վոկալ-էստրադային համույթը քաղաքային և համապետական միջոցառումներին պատշաճ ներկայանալու համար գործիքավորել և ձայնագրել է տարբեր երգեր, հանդես է եկել նաև տեսահոլովակներ թողարկելով: Այս պահին, մայրության և գեղեցկության տոնին ընդառաջ ընթանում են նոր երգի գործիքավորման և ձայնագրման աշխատանքները, որի հիման վրա տեսահոլովակ նկարելու համար ակնկալում ենք Գյումրու համայնքապետարանի աջակցությունը:
Տեսահոլովակը նախատեսվում է թողարկել ապրիլի 7-ին՝ մայրության տոնի առիթով, մասնակցությամբ "Դեղձանիկ" վոկալ-էստրադային համույթի բոլոր սաների:
Նկարահանումներն իրականացվելու են 3-4 օրերի ընթացքում Գյումրու հայտնի տեսարժան վայրերում, ինչը հնարավորություն կտա նաև հանրահռչակել քաղաքը, ներկայացնել իր արհեստավորական և արվեստի միջավայրը:
Նկարահանման աշխատանքներն իրականացնելու համար հարկավոր է 400 000 ՀՀ դրամ:
Կից ներկայացնում ենք գնային առաջարկներ համապատասխան ծառայությունն իրականացնելու համար:
Կանխավ հայտնում ենք մեր շնորհակալությունը:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
Քարտուղարության բաժին
ՍՏԱՑՎԱԾ է 25.02. 2026 թ.
ԳՐԱՆՑՎԱԾ է N 9597

Դիմող՝
,,Մանկապատանեկան արվեստի պալատ ,,ՀՈԱԿ-ի տնօրենի ժ/պ / / Վ.Մատինյան

ՀՀ, ք. Երևան, Գևորգ Չաուշ 11/5
Gevorg Chaush 11/5, Yerevan, RA
Էլ. փոստ՝ armtimeprod@gmail.com
Հեռ.՝ +374 91 227724

ՀՎՀՀ 03559635
«Արարատբանկ» ԲԲԸ, Հ/Հ 1510054701750100

*Վիդեոնկարահանման ծառայություններ*

## Գնառաջարկ

| Գործողություն | Քանակ | Արժեք (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Վիդեոնկարահանում (2 տեսախցիկ,ներառյալ՝ ronin) 10-15 տեղադիրք | 1 տեսահոլովակ | 400.000 |

*23․02․2026*

*Գեւորգ Գեւորգյան*____________________
*ստորագրություն*

«ԳԵՎՈՐԳ ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՀՐԱՄԻ» ԱՁ
Գործ. հասցե ք.Գյումրի, Բագրատունյաց օղակ 6շ., բն.8
ՀՎՀՀ 57397275
Կոնվերսբանկ ՓԲԸ , Հ/Հ19300894081200
Էլփոստ՝ photo.gyumri@gmail.com
Հեռ. +374 93 006719, +374 55 511654

# ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

| Հ/Հ | Անվանում | Քանակ | Միավոր | Միավորի գին (դրամ) |
|---|---|---|---|---|
| 1 | Նկարահանում 3 օր, քաղաքի տարբեր հատվածներ, 2 տեսախցիկ | 1 | հատ | 500.000 |

ք.Գյումրի, 24.02.2026թ.

Գ.Ղազարյան